



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2158

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 22/8 ԵՎ
Ս. ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ 13/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱԿ ԹԵԼՄԱՆԻ
ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ
ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արաիկ Թեվմանի Մովսիսյանի 05.09.2025 թվականի թիվ 02/12884 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29082025-06-0064 և 18082025-06-0035 վկայականները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գ. Նարեկացու փողոց 22/8 և Ս. Թևոսյան փողոց 13/2 հասցեներում գտնվող Արաիկ Թեվմանի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.02321 հա ընդհանուր մակերեսով հողամասերը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Գ. Նարեկացու փողոց, 22/8 պարիսպ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2159

ՀՀ ԼՈՐԻԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԾՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով՝ որոշում եմ.

- 1.«Վանաձոր համայնքի թիվ 11 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2025 թվականի հոկտեմբերի 23-ին անցկացնել մրցույթ
- 2.«Վանաձոր համայնքի թիվ 31 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2025 թվականի հոկտեմբերի 23-ին անցկացնել մրցույթ
- 3.«Վանաձոր համայնքի թիվ 33 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2025 թվականի հոկտեմբերի 23-ին անցկացնել մրցույթ
- 4.«Վանաձոր համայնքի թիվ 35 մսուր - մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2025 թվականի հոկտեմբերի 23-ին անցկացնել մրցույթ
- 6.Մրցույթների անցկացման մասին հայտարարությունը հրապարակել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:
- 7.Սույն որոշման մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել պետական լիազոր մարմինն և ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին:
- 8.Հաստատել մրցույթների հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

9. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վիրաբյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2025թ. սեպտեմբերի 22
ք. Վանաձոր



Ա. ՓԵԼԵԾՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2160

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1717-Լ որոշման N 2 հավելվածի 1.2.1 կետերով. որոշում եմ

1. Հաստատել՝

- 1) Աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.
- 2) Համայնքի բնակավայրերի վտանգների, խոցելիության և կարողությունների սխեմատիկ պատկերները՝ համաձայն N 2 հավելվածի.
- 3) Աղետների ռիսկի կառավարման միջոցառումների օրացույցը՝ համաձայն N 3 հավելվածի.
- 4) Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլան-ժամանակացույցը՝ համաձայն N 4 հավելվածի.
- 5) Ազդարարման և տեղեկատվության փոխանակման սխեման՝ համաձայն N 5 հավելվածի.
- 6) Ստանդարտ գործողությունների ընթացակարգերն ըստ բնորոշ աղետների՝ համաձայն N 6 հավելվածի.

2. Սույն որոշման 1-ին կետով հավելվածները հաստատվում են երեք տարի ժամկետով:

3. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման ժամանակ՝ սույն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով հաստատվող N 6 հավելվածում ներառված միջոցառումներից որևէ երեքն իրականացնելու դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2161

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ 06-084-0079-0016) ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալիսա Սիմոնի Արոյանի լիազորված անձ Նաիրա Ժորայի Միսկարյանի 03.09.2025թ. թիվ 12710 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1744653 վկայականը, 21.08.2025թ. տրված թիվ 314 (նոտարական ակտի կոդ: 494-20250820-79-9311933) լիազորագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /256762/ քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի, գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0079-0016) գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 4-րդ փողոց, 23 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2162

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 30
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԴՎԱՐԴ ԳԱՌՆԻԿԻ ԵԶԵԿԵԼՅԱՆԻ ԵՎ
ՍԱՄՎԵԼ ԳԱՌՆԻԿԻ ԵԶԵԿԵԼՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդվարդ Գառնիկի Եզեկեյանի և Սամվել Գառնիկի Եզեկեյանի 03.07.2025 թվականի թիվ 02/9250 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /250207/, 14.08.2010 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3309 վկայագիրը, 06.08.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-186/25 հեղրակացությունը, 05.09.1986 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների հեղրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 30 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 187քմ դրան կից 233քմ մակերեսներով հողամասերը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1964-1993թթ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 420քմ, որը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ 2 տնատիրությունների միջև:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, **որոշում եմ.**

1. Ճանաչել Էդվարդ Գառնիկի Եզեկեյանի (1/2) և Սամվել Գառնիկի Եզեկեյանի (1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Երևանյան

խճուղի թիվ 30 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 187քմ մակերեսով հողամասին կից 233քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

420քմ մակերեսով հողամասը ընդհանուր համատեղ սեփականություն է 2 տնատիրությունների՝ Էդվարդ Գառնիկի Եզեկեյանի, Սամվել Գառնիկի Եզեկեյանի և Էդվարդ Գառնիկի Եզեկեյանի միջև:

2. Ճանաչել Էդվարդ Գառնիկի Եզեկեյանի(1/2) և Սամվել Գառնիկի Եզեկեյանի (1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 30 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տան կառուցման և սպասարկման համար 420քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Զորավար Անդրանիկի փողոց, 28 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2163

ՀՀ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 02-Ի
ԹԻՎ 2075 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 05/115,2/07754-2025 գրությունը՝ Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 02-ի «Համեստ, Կարեն, Արեն, և Նարեկ Վլադիմիրի Մելիքյաններին՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, սկզբնական հաշվառման վերցնելու, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի կենտրոններում նրանց խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու մասին» թիվ 2075 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 111-րդ հոդվածներով՝
որոշում եմ.

ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 02-ի «Համեստ, Կարեն, Արեն, և Նարեկ Վլադիմիրի Մելիքյաններին՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, սկզբնական հաշվառման վերցնելու, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի կենտրոններում նրանց խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու մասին» թիվ 2075 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման վերնագրից և նախաբանից հանել «Համեստ,» բառը:
2. Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Բաթումի փողոցի թիվ 3/1 հասցեի անչափահաս բնակիչներ՝

1) Կարեն Վլադիմիրի Մելիքյանին (ծնված՝ 15.12.2014թ., ծննդյան վկայական ԲԱ 523004, տրված՝ 18.02.2022թ., Շահումյանի ՔԿԱԳ տ/բ-ի կողմից)՝

2) Արեն Վլադիմիրի Մելիքյանին (ծնված՝ 08.01.2016թ., ծննդյան վկայական ԲԱ 339112, տրված՝ 25.12.2020թ., Ստեփանակերտի ՔԿԱԳ տ/բ-ի կողմից)՝

3) Նարեկ Վաղիմիրի Մելիքյանին (ծնված՝ 26.02.2017թ., ծննդյան վկայական ԱԲ 437995, տրված՝ 26.02.2017թ., Շահումյանի ՔԿԱԳ տ/բ-ի կողմից). որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, վերցնել սկզբնական հաշվառման, նրանց խնամքը և դաստիարակությունը ընտանիքում (որդեգրման) կամ խնամատար ընտանիքում կազմակերպելու, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար բոլոր տիպի կազմակերպություններում կազմակերպելու մասին տալ դրական եզրակացություն»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 22
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2164

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 30
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԴՎԱՐԴ ԳԱՌՆԻԿԻ ԵԶԵԿԵԼՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդվարդ Գառնիկի Եզեկեյանի 03.07.2025 թվականի թիվ 02/9254 դիմումը, անշարժ գույքերի հաւցեւեր տրամադրելու մասին որոշման քաղվածքը /246679/, 06.08.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-186/25Ի եզրակացությունը, 14.05.1987 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 30 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 189քմ դրան կից 231քմ մակերեսներով հողամասերը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1949թթ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 420քմ, որը հանդիսանում է ընդհանուր համատեղ սեփականություն 2 տնատիրությունների միջև:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, **որոշում եմ**

1. Ճանաչել Էդվարդ Գառնիկի Եզեկեյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 30 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 189քմ մակերեսով հողամասին կից 231քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

420քմ մակերեսով հողամասը ընդհանուր համատեղ սեփականություն է 2 տնատիրությունների՝
Էդվարդ Գառնիկի Եզեկեյանի, Սամվել Գառնիկի Եզեկեյանի և Էդվարդ Գառնիկի Եզեկեյանի
միջև:

2. Ճանաչել Էդվարդ Գառնիկի Եզեկեյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի
15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 30 հասցեում կառուցված
իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տան կառուցման և
սպասարկման համար 420քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության
շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից
տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված
հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր
համայնք, Վանաձոր ք., Հորավար Անդրանիկի փողոց, 30 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2165

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ
ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՔ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՅՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ,
ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՏԱՑԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանիկ Նորիկի Հակոբյանի 23.01.2024 թ. թիվ 02/1486 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 22.12.2023թ. թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 2023KSB3AA), 18.06.2025 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 69/ 25 ա եզրակացությունը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի հարևանությամբ ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 52.13քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 45.17քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 52.14քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք Նարեկացու փողոցի հարևանությամբ գտնվող 0.005214 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման հողերից բնակելի կառուցապատման հողերի:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Նարեկացու փողոցի հարևանությամբ գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Գ. Նարեկացու փողոց, 1-ին նրբանցք, 1/11 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2166

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԴԱՐՊԱՍՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-033-0021-0012)
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Ֆելիքսի Թովմայանի 15.08.2025 թվականի թիվ 02/11588 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1873587 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր համայնք, գյուղ Դարպասում (ծածկագիր: 06-033-0021-0012) գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Դարպաս, 3-րդ փողոց, 19 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2167

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ
17 ՇԵՆՔԻ ԱՐԵՎԱՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵԾՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ
ՕՐԻՆԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոմանոս Վիլյամսի Մելիքյանի 29.12.2023.թ. թիվ 02/23485 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Գասպար Վեքիլյանի» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 29.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023WKDHEQ), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց թիվ 17 շենքի արևմտյան մասում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 40.5քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 39.20քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 40.5քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

Ամրակցված է բետոնային հիմքերով և հանդիսանում է հիմնական շինություն, շինությունը ենթակա է պետական գրանցման:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու

մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Շինարարների փողոց թիվ 17 շենքի արևմտյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Շինարարների փողոց, 17/31 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2168

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ,
ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ
ՓՈԱՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոմանոս Վիլյամսի Մելիքյանի 29.12.2023.թ. թիվ 02/23486 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Գասպար Վեքիլյանի» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 29.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023PSDF3X), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի արևմտյան մասում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 22.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21.84քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 22.8քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

Ամրակցված է բետոնային հիմքերով և հանդիսանում է հիմնական շինություն, շինությունը ենթակա է պետական գրանցման:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու

մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Շինարարների փողոցի արևմտյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Շինարարների փողոց, 13/47 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2169

ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔ ՇԻՐՎԱՆՁԱԴԵԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 24/1
ՀԱՍՑԵՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՀԱՆ ԱՇՈՏԻ ՂԱԲՈՒՋՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահան Աշոտի Ղաբուլյանի 26.04.2024 թվականի թիվ 02/7821 դիմումը, անշարժ գույքի սեփականության / օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 2220323 վկայականը, 30.12.2023 թվականի հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր :2023GLUWSG), «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, բնութագիրը, և մասնագիտական եզրակացությունը 23.05.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-126/25 Ի եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել օրինական համայնք Վանաձոր Վանաձոր քաղաք Շիրվանզադեի փողոց թիվ 24/1 հասցեում գտնվող , Վահան Աշոտի Ղաբուլյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 50.3 քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունները համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Վահան Աշոտի Ղաբուլյանի կողմից 50.3 քմ ընդհանուր ն մակերեսով ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունների համար օրինականացման համար

սահմանված վճարը 189682 /հարյուր ութսունինը հազար վեց հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2025թ. սեպտեմբերի 22
ք.Վանաձոր



 Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2170

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
1983 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 20 օգոստոսի 2025 թվականի 1983 որոշումը, «ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ -ի կողմից տրված հողամասի բաժանման սխեման, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 20 օգոստոսի 2025 թվականի «Համայնք Վանաձոր գյուղ Գուգարքում /հողամասի ծածկագիր՝ 06-031-0261-0009/ գտնվող Վանաձոր քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամաս որպես երկու առանձին գույքին միավորներ տարանջատելու և փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 1983 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման 2- կետը կարդալ հետևյալ նոր բովանդակությամբ՝

«2. Վանաձոր համայնք, գյուղ Գուգարքում /հողամասի ծածկագիր՝ 06-031-0261-0009/ գտնվող հողամասին տրամադրել փոստային հասցե.

ա. 1.406245 հա մակերեսով հողամասը հանդիսանում է գյուղատնտեսական նպատակային նշանակության գործառնական նշանակությամբ արոտավայր.

բ. 0.407525 հա մակերեսով հողամասը հանդիսանում է գյուղատնտեսական նպատակային նշանակության գործառնական նշանակությամբ արոտավայր.

գ. 2.601346 հա մակերեսով ընդերքդատագործման գործառնական նշանակությամբ հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2171

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-031-0035-0009) ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լադիկ Նորիկի Քարհանյանի լիազորված անձ՝ Արտակ Զարմայիլի Հարությունյանի 07.08.2025թ. թիվ 02/11144 դիմումը, անշարժ գույքի սեփականության նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1742735 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 28.07.2025թ. տրված թիվ 127 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 494-20250728-79-9232535), 06.08.2025 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 188 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 494-20250806-84-9264209), 06.08.2025 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 189 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 494-20250806-84-9264263), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում (ծածկագիր: 06-031-0035-0009) գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 5-րդ փողոց, 28/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 22
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 2172

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1704
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հասմիկ Վանյանի Վարդանյանի լիազորված անձ՝ Խաչիկ Գալուստի Վարդանյանի 20.08.2025 թվականի թիվ 02/11850 դիմումը, 15.08.2025 թվականի թիվ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-15082025-06-0035 որոշումը, «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների նոր հատակագիծը, 19.08.2025 հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 2025PB9EDP), 27.07.2025 թվականի թիվ 3204 լիազորագիրը, (նոտարական ակտի կոդ: 843-20250627-90-9137075), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 28 հուլիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Մարզարյան փողոց թիվ 20 հասցեի բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Հասմիկ Վանյայի Վարդանյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1704 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Որոշման նախաբանում և 1-ին կետում «400.0քմ դրան կից 299.0քմ» բառերը փոխարինել «400.0քմ դրան կից 286.8քմ» բառերով

2.Որոշման նախաբանում, 2-րդ և 3-րդ կետում «699.0 քմ » բառերը փոխարինել «686.8 քմ» բառերով

3.Որոշման նախաբանում և 1-ին կետում «699.0քմ մակերեսով հողամասը հանդիսանում է բաժնային սեփականություն երկու տնատիրությունների միջև» բառերը փոխարինել հետևյալ՝

«686.8քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն Հասմիկ Վանյայի Վարդանյանին պատկանող Մարզարյան /պայմանական/ 20 հասցեում գտնվող տնատիրության և Անահիտ Սերյոժայի Վարդանյանին պատկանող /պայմանական/ 20 հասցեում գտնվող տնատիրության միջև յուրաքանչյուրի բաժնեմասը 843.4 քմ (1/2 մասով):»բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏՈՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 2173

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023-2025թթ. ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԳԾՄԱՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ,
ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼՈՒՄ ԵՎ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՕՐՅԵԿՏԻ
ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԸ 3-ՐԴ ԱՍՏԻՃԱՆՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 19 մարտի 2015թ. թիվ 596-Ն որոշմամբ հաստատված
կարգի՝ որոշում եմ.

- Վանաձոր համայնքում 2023-2025թթ. Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից տրված
նախագծման (ճարտարապետահատակագծային առաջադրանք) և շինարարության
թույլտվություններում բազմաբնակարան շենքի ծավալում և ծավալից դուրս իրականացվող
կառուցապատման փաստաթղթերում թույլ տրված սխալը դիտարկել որպես տեխնիկական
անճշտություն՝ օբյեկտի ռիսկայնության 2-րդ աստիճանը փոխարինելով 3-րդ աստիճանի՝
համաձայն կից հավելվածի:
- Վերը նշված կառուցապատման փաստաթղթերում առկա երաշխավորագրերը դիտարկել
որպես փորձաքննություն:
- Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի
կառավարման բաժնին՝ որոշման օրինակը ուղարկել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և
հրդեհային անվտանգության տեսչական մարմնին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 2174

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ 02 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 816 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վանաձոր համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով՝ որոշում եմ.

Հաստատել Վանաձոր համայնքի.

1. Խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել «Վանաձոր համայնքում աղետների ռիսկի կառավարման խորհրդի ստեղծման մասին և 11 մարտի 2025 թվականի թիվ 639 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» 02 ապրիլի 2025թ.-ի թիվ 816 որոշումը:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

Հավելված N 1

Վանաձոր համայնքի ղեկավարի

«23» 03.2025 թ.-ի թիվ 2124 որոշման

ԿԱԶՄ

ՎԱՆԱԶՈՐ ԲԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. Խորհրդի ղեկավար՝ Փելեշյան Արկադի /համայնքի ղեկավարի պաշտոնակատար/,
2. Խորհրդի ղեկավարի տեղակալ-տարիանման և պատասխարման պատասխանատու՝ Բերնեցյան Արման /համայնքի ղեկավարի խորհրդական/,
3. Խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Հայկ Վիրաբյան /Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար/,
4. Խորհրդի անդամներ՝
 - 1) ավագանու անդամ Ղամբարյան Սեյրան,
 - 2) ավագանու անդամ Մկրտչյան Վահագն,
 - 3) ավագանու անդամ Խաչատրյան Արեն,
 - 4) բնակավայրի վարչական ղեկավարներ՝
 - ա. Գուգարձ բնակավայրի վարչական ղեկավար՝ Հայկանուշ Սարգսյան,
 - բ. Շահումյան բնակավայրի վարչական ղեկավար՝ Արարատ Աթոյան,
 - գ. Դարպաս բնակավայրի վարչական ղեկավար՝ Արմեն Ալոյան,
 5. Ոլորտային պատասխանատուներ՝
 - ա. Հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Սահակյան Հովիկ, Ղարաբեշյան Սերգեյ, Մխիթարյան Գարեգին /Վանաձորի թիվ 1, թիվ 2 և Գուգարձի ՀՓՁ-ի իրամանատարներ/ (համաձայնությամբ),
 - բ. Հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Կարեն Կյուրեղյան (համաձայնությամբ),
 - գ. Տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Մովսիսյան Արման,
 - դ. Կապի պատասխանատու՝ Ավետիքյան Աստղիկ /համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար/,
 - ե. Բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Հագոռյան Մեսրոպ /«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն/ (համաձայնությամբ),
 - զ. Կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Հակոբյան Գեղանի /Համայնքապետարանի հանրային կապերի, լրատվության բաժնի պետ/,
 - է. Էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Տիգրան Հովսեփյան /«ՀԷՑ ՓԲԸ «ԴԵԲԵԴ» մասնաճյուղի» ՓԲԸ-ի տնօրեն/ (համաձայնությամբ),
 - ը. Ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Ալավերդյան Արմեն /Համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի տեղակալ/,
 - թ. Կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Վարդյան Ռուդիկ /Համայնքապետարանի իրավաբանական բաժնի պետի ժ/պ/,

ժ. Անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝
Կոստանյան Կարեն /Համայնքապետարանի համատիրությունների
աշխատանքների համակարգման բաժնի պետի տեղակալ /:

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Վանաձոր համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Վանաձորի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

2. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) Համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) Համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) Աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների իստեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) Համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) <<Դիմակայուն համայնք>> ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) Բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոսների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) Նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) Հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացումը բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) Վարժանքների կազմակերպումը և անցկացումը

14) Աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

3. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) Համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) Կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) Իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) Կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) Դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) Ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) Արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) Առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) Սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) Բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) Ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) Բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) Տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) Դիակների հողարկավորման համար հողհատկացման և հողարկավորման կազմակերպման ապահովումը,

17) Կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) Ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) Աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) Վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 սեպտեմբերի 2025 թվականի N 2175

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
